

**Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր Ո Ւ**  
**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ**  
**ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ N 02551341-ԱՊ**  
**ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**  
**01/05/2025թ.**

**ՀՀ առողջապահության նախարարությունը** (այսուհետ՝ Ապահովագրի)՝ ի դեմս **գլխավոր քարտուղար Վարդանուշ Գրիգորյանի** մի կողմից, և «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ ապահովագրող)՝ ի դեմս **գործադիր տնօրեն Արմինե Մելքոնյանի** մյուս կողմից, հետագայում երկու կողմերը միասին կանվանվեն «Կողմեր», կնքեցին 07/04/2025թ.-ին կնքված սոցիալական փաթեթի շահառուների առողջության ապահովագրության N 02551341-ԱՊ պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) փոփոխություններ կատարելու վերաբերյալ սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

- Հիմք ընդունելով առողջապահության նախարարի 2025 թվականի ապրիլի 28-ի N 2568- Լ հրամանը՝ Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.
  - Պայմանագրի N 2 Հավելվածում կատարել փոփոխություն՝ համաձայն N 1 հավելվածի:
  - Սույն համաձայնագրի 1.1 կետով նախատեսված փոփոխություններով պայմանավորված
    - Պայմանագրի 5.2 կետում «**144 810 000 000 ՀՀ դրամ**» բառերը փոխարինել «**217 240 000 000 ՀՀ դրամ**» բառերով,
    - Պայմանագրի 6.2 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ ««2025 թվականի հաշվարկային պայմանագրային ընդհանուր գումարը կազմում է **476 058 155 ՀՀ դրամ**»:
    - Պայմանագրի 6.1 կետում 122.15 ՀՀ դրամ (ներառյալ կանխարգելիչ բժշկական քննությունը) և 103.23 ՀՀ դրամ (առանց կանխարգելիչ բժշկական քննության) բառերը փոխարինել 125.89 ՀՀ դրամ (ներառյալ կանխարգելիչ բժշկական քննությունը) և 106.44 ՀՀ դրամ (առանց կանխարգելիչ բժշկական քննության) բառերով:  
Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 01/01/2025թ. ժամը՝ 00:01-ին և ավարտվում 30/06/2025թ. ժամը՝ 23:59-ին:
- Կողմերը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, համաձայնում են, որ սույն համաձայնագիրը տարածվում է միմյանց միջև 2025թ.-ի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:
- Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

**ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ**

**ԱՊԱՀՈՎԱԴԻՐ**

**«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ**

**Հայաստանի Հանրապետության  
առողջապահության նախարարություն**

Հասցե՝ ք. Երևան, 0010, Արամի 3, 5  
Հեռ.՝ + 374 60 54 00 00  
Էլ. փոստ՝ statemedclaims@silinsuracne.net  
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ  
Բանկային հաշիվ՝ 163007039676  
ՀՎՀՀ՝ 02551341

Հասցե՝ Երևան, Կառավարական տուն 3  
Հեռ.՝ +374 60 80-80-03  
Էլ. փոստ՝ info@moh.am  
Բանկ՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի  
գործառնական վարչություն  
Բանկային հաշիվ՝ 900011105013  
ՀՎՀՀ՝ 02507171

**Գործադիր տնօրեն՝  
Արմինե Մելքոնյան**

**ՀՀ առողջապահության նախարարության  
գլխավոր քարտուղար՝ Վարդանուշ Գրիգորյան**

Հավելված N 1  
 Սոցիալական փաթեթի շահառուների  
 առողջության ապահովագրության պայմանագրում  
 փոփոխություններ կատարելու վերաբերյալ  
 01/05/2025թ. կնքված համաձայնագրի

«Հավելված N 2  
 Սոցիալական փաթեթի շահառուների  
 առողջության ապահովագրության պայմանագրի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ**

(«« դրամ)

Ծրագրային դասիչ	Ծրագրի անվանումը	Վճարման ենթակա ապահովագրավճարի մասնաբաժինները և դրանց համապատասխան վերջնաժամկետները												
				մինչև 2025թ. ապրիլի 30-ը	մինչև 2025թ. Մայիսի 31-ը	մինչև 2025թ. Հունիս 30-ը							Ընդամենը տարի	
1207- 11004	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ			214 047 200	415 667 800	476 058 155								<b>476 058 155</b>

**Ապահովագրող**

(ստորագրությունը)

**Ապահովադիր**

(ստորագրությունը)